ֆիզիկամաթեմատիկական։ Ցաջորդ տարեանից պիտի բացէր և բժշկական բաժինը։ Մինչև հոկտ. 1 արձանագրուել էին 632 երկսեռ ուսանողներ, որոնցից 403 հոգին կամենում էին մտնել բնագիտական բաժինը, չատերը գիւղատնտեսական մասը։

Երևանում բացելու էր պետական երաժշտանոց, որի համար տեսուչ էր հրաւիրուում Մոսկուայի երաժշտանոցի նախկին տեսուչ, յայտնի երաժշտագէտ Իպոլիտով-Իվանովը, իսկ դասատուներ՝ ազատ արուեստագէտ Բարխուդարեանը, նշանաւոր երաժշտագէտ Սպենդիարեանը, Մելիքեանը և ուրիշներ։

Պետական թատրոնի կազմակերպման համար, Պոլսում վախճանուած դերասան Սեւումեանի առաջարկով, մտածուում էր հրաւիրել Մոսկուայի Գեղարուեստական Թատրոնի հիմնադիրներից՝ հռչակաւոր ռեժիսոր Գ. Բուրջալեանին և հայ բեմի առաջնակարգ ուժերին։ 1920թ. ամառուայ ընթացքում դերասաններ Զարիֆեանը, Աբելեանը, Մայսուրեանը, ընտիր խմբով, Երևանում տուին մի երկար շարք ներկայացումների և ունեցան բացառիկ յաջողութիւն։ Թատրոնի պահանջը շատ մեծ էր։

Սեպտեմբերին Ալեքսանդրապոլում բացելու էր ժողովրդական դեղարուեստի ուսումնարան, որի նպատակն էր լինելու արտայայտել ժողովրդական ստեղծագործութեան արժէքները՝ գորգագործութիւնը, ազնիւ մետաղների մշակոյթը, պղնձի, քարի մշակման գործը, ձեռարուեստի և նուրբ գործուածքների մշակման գործը և այլն։ Դպրոցին կից լինելու էր տնայնագործական կոմիտէի գեղարուեստական-արդիւնաբերական թանգարանը, որի համար խնամ. նախարարութեան աշխատանքի բաժինը արդէն ձեռք էր բերել 100-ից աւելի ընտիր գորգեր, կապերտներ և ուրիշ գործուածքներ։ Դպրոցի կազմակերպումը յանձնուած էր խնամ. նախարարութեան աշխատանքի բաժնի վարիչ Ակունեանին։

Սեպտ. 27-ին Ալեքսանդրապոլում, մեծ հանդիսաւորութեամբ, բացուեց հաղորդակցութեան նախարարութեան տեխնիկական միջնակարգ դպրոցը ինժ. Շերմազանեանի տեսչութեամբ։ Մի ամիս յետոյ, հոկտ. 25-ին, Երևանում պիտի բացէր երկրորդ տեխնիկական դպրոցը։

Կարսում բացելու էր Ռազմական Գիմնազը։ Էջմիածնում վերաբացուելու էր ճեմարանը։ Երևանում բացելու էր միջնակարգ բժշկական վարժարան, Ուսուցչական Սեմինար և այլն։ Բացի այդ, Երևանում և ուրիշ քաղաքներում կային բազմաթիւ մասնագիտական դպրոցներ ու դասընթացներ, ինչպէս սղագրութեան, կար ու ձևի, գորգագործութեան, գինեորական, հաշուապահական, բժշկական, երկաթուղային, մանկավարժական, երկրաչափական, հայերէն և օտար լեզուների, սկաուտական և այլն։

Գործում էին և այլազան ընկերութիւններ ու միութիւններ. Հայաստանի Գրական Ընկերութիւնը, Հայաստանի Մարմնամարզական Ընդհանուր Միութիւնը, Հայաստանի Տեխնիկական, Իրաւաբանական, Բժշկական, Ուսուցչական, Ուսանողական Միութիւնները, Հրատարակչական Ընկերու-